Դիանա ԳԱԼՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

2001 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ընդունվել ասպիրանտուրա: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2014 թ.՝ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 2018 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

2005 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում. սկզբում՝ որպես ասիստենտ, 2006 թ.՝ որպես դոցենտ: 2017 թ. ընտրվել է ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի պաշտոնում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ապա ռեկտորի պաշտոնակատար: Հեղինակ է շուրջ 57 գիտական հրապարակումների, այդ թվում՝ 10 մենագրության, 5 ուսումնական ձեռնարկի:

COVID-19-ի ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՈՐՈՇ ՇՈԿԵՐԻ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *կորոնավիրուս, նավթ, համաշխարհային շուկա, արժույթի փոխարժեք, ճգնաժամ, շոկ*

Կորոնավիրուսի տարածման պատճառով նավթի համաշխարհային շուկայում տեղ է գտել նավթի գների վրա ազդող գործոնների հազվադեպ պատահող համադրություն. մի կողմից՝ արդյունահանման ծավալների աճ, մյուս կողմից՝ սպառման ծավալների կրճատում և շուկայում «կայունացնող արտադրողի» բացակայություն: ՄԱԿ-ի փորձագետները վերոհիշյալ գործոններին ավելացնում են նաև երկրների ֆինանսական խնդիրները: Այս ամենը հանգեցրել է նավթարդյունահանող, ինչպես նաև նավթի գների հանդեպ զգայուն տնտեսությամբ երկրների ազգային արժույթների արժեզրկմանը, ինչն էլ, իր հերթին, ըստ փորձագետների, կառաջացնի օտարերկրյա ներդրումների և համաշխարհային ՀՆԱ անկում:

2020 թ. առաջին ամիսներին, երբ նոր կորոնավիրուսը (COVID-19) լայնորեն տարածվում էր Չինաստանում, մասնագետները կանխատեսում էին նավթի գների անկում՝ կապված զբոսաշրջության և Չինաստանում տնտեսական գործունեության այլ տեսակների ծավալների կրճատման հետ: Հարկ է նշել, որ Չինաստանը նավթի սպառման ծավալներով աշխարհում երկրորդ երկիրն է ԱՄՆ-ից հետո, և նրան է բաժին ընկնում նավթի համաշխարհային սպառման ծավալների 13,2%-ը[1]:

Երբ այս տարվա փետրվարի սկզբին COVID-19-ը տարածվեց Եվրոպայի հիմնական զբոսաշրջային կենտրոններում, մասնավորապես՝ Իտալիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում, եվրոպական երկրների մեծ մասն էապես

[1] https://www.worldometers.info/oil/oil-consumption-by-country/#china

կրճատեց թռիչքները դեպի այլ երկրներ, արգելեց օտարերկրյա քաղաքացիների մուտքն իրենց երկրներ, ինչի հետևանքով էլ նավթի աճող առաջարկն ուղեկցվեց դրա հանդեպ նվազող պահանջարկով: Հենց դա էր պատճառը, որ մարտի 4-6–ը ՕՊԵԿ(+)-ի անդամ երկրները Վիեննայում (Ավստրիա) հրավիրեցին արտահերթ համաժողով՝ բանակցելու նավթի համաշխարհային շուկայում տիրող իրավիճակի շուրջ[2]: Որպես կարճաժամկետ միջոցառում՝ ներկայացվեց նավթի արդյունահանման ծավալների կրճատումը, որի միջոցով պետք է կասեցվեր նավթի գների անկումը համաշխարհային շուկայում: Հանդիպման ընթացքում ՕՊԵԿ-ի անդամ երկրներին առաջարկվում էր նավթի օրական արդյունահանումը կրճատել 1 մլն, իսկ ՕՊԵԿ-ի գործընկներ երկրներին՝ 500 հազար բարելով[3]: Սակայն, Ռուսաստանը, որն ՕՊԵԿ-ի գործընկեր երկրներից ամենամեծն է, հրաժարվեց ընդունել այդ առաջարկը, ինչի հետևանքով բանակցությունները ձախողվեցին: Այս իրադարձությանն անմիջապես արձագանքեցին ֆոնդային բորսաները. նավթի գները մեկ օրվա ընթացքում նվազեցին գրեթե 30%-ով, և դա վերջին 30 տարվա ընթացքում ամենամեծ անկումն էր: Ինչպես նշում է էներգաշուկաների գծով խորհրդատու Բ. Մակնալլին, նավթի համաշխարհային շուկայում տեղ է գտել նավթի գների վրա ազդող գործոնների հազվադեպ պատահող համադրություն. մի կողմից՝ նավթի արդյունահանման ծավալների աճ (առաջարկի շոկ), մյուս կողմից՝ COVID-19-ի հետևանքով, նավթի սպառման ծավալների կրճատում (պահանջարկի շոկ) և շուկայում «կայունացնող արտադրողի» բացակայություն: Վերջին անգամ նման համադրություն երևան էր եկել 1930-ական թթ. Մեծ ճգնաժամի տարիներին[4]: Միացյալ ազգերի կազմակերպության փորձագետները վերոհիշյալ գործոններին ավելացնում են նաև ֆինանսական խնդիրները: Այսպես՝ նավթի արտահանման և ներմուծման ծավալների կրճատումն էապես ազդում է նաև նավթարտահանող երկրների եկամուտների և տվյալ ոլորտում աշխատողների զբաղվածության մակարդակի վրա: Թեև շուկայի վրա ազդող բոլոր գործոններն այս պահին կանխատեսել հնարավոր չէ, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ, առաջին հերթին, կնվազի նավթարդյունահանող երկրների՝ նավթից ստացվող շահույթի մակարդակը: Պահանջարկի փոփոխությունը կհարվածի համախառն առաջարկին, ինչպես նաև երկրների ֆինանսական կայունությանը[5]:

Խոսելով նավթի գների մասին՝ հարկ է նշել, որ Brent և WTI տեսակի նավթի գները մարտի 9-ին՝ ֆոնդային բորսայի բացվելուց անմիջապես հետո, անկում ապրեցին 12,44 ԱՄՆ դոլարով, կազմելով համապատասխանաբար՝ 32,83 և 28,84 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց (գծապատկեր 1):

Նավթի գների անկումն էապես ազդեց նաև նավթարդյունահանող, ինչպես նաև նավթի գների հանդեպ զգայուն տնտեսությամբ երկրների ազգային արժույթների արժեզրկման վրա, ինչի հետևանքով կանադական դոլարն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 1,4%-ով, նորվեգական կրոնը՝ 4,7%-ով, իսկ ռուսական ռուբլին մարտի ընթացքում արժեզրկվեց մինչև 18% (գծապատկեր 2): Ռուսական ռուբլու արժեզրկումն էապես ազդեց Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արժույթների վարքագծի վրա: Այսպես՝ նույն ժամանակահատվածում ղազախական տենգեն արժեզրկվեց 17,0%-ով, բելառուսական ռուբլին՝ 17,2%-ով, ղրղզական սոմը՝ 14,1%-ով, իսկ հայկական դրամը՝ 3,39%-ով[6]:

[2] OPEC 178th (Extraordinary) Meeting of the Conference concludes, https://www.opec.org/opec_web/en/press_room/5865.htm
[3] Сделка ОПЕК о сокращении добычи нефти сорвалась. Цены на нефть обвалились, https://www.bbc.com/russian/news-51770134
[4] Oil price crash sends global stocks tumbling, The Financial Times Limited, 2020.
[5] The coronavirus shock: A story of another global crisis and what policymakers should be doing about it. Trade and development report update, March, 2020.
[6] https://bankir.ru



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Brent տեսակի նավթի գների տատանումները 2020 թ. մարտի ընթացքում[7]

Թեև դեռ վաղ է խոսել համաշխարհային տնտեսական ճգնաժամի մասին, այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ կարճաժամկետում լճացումը (ստագնացիան) անխուսափելի է, քանի որ առկա են դրան նպաստող բոլոր գործոնները: Նավթի գների անկումը, որն արժույթների արժեզրկման պատճառ է դարձել, հանգեցնելու է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի նվազմանը և ՀՆԱ անկմանը: Մասնավորապես, ըստ ՄԱԿ-ի «Ներդրումների միտումների մշտադիտարկում» վերլուծականի, որտեղ իրականացվել են կանխատեսվող համաշխարհային ներդրումների ճշգրտումներ, հաշվի առնելով COVID-19-ի տարածման երկու հնարավոր սցենարները, նշվում է, որ համաշխարհային ներդրումները կկրճատվեն 5%-ով, եթե COVID-19-ի տարածումը հնարավոր լինի կանխել 2020 թ. առաջին կեսին: Հակառակ դեպքում, ներդրումների կրճատումը համաշխարհային մակարդակով կհասնի մինչև 15%: Այսօր արդեն COVID-19-ի տարածման հետևանքով համաշխարհային խոշոր վերազգային կորպորացիաներն ունեցել են եկամուտների հսկայական կորուստներ: Այսպես՝ ամենամեծ կորուստը բաժին է ընկել ասիական՝ -18%, զարգացող՝ -16% և անցումային տնտեսությամբ՝ -10% երկրների վերազգային կորպորացիաներին[8]: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարտին COVID-19 համավարակն ավելի մեծ վնաս հասցրեց զարգացած աշխարհին, մասնավորապես՝ ԵՄ երկրներին և ԱՄՆ-ին, հետևաբար՝ զարգացած երկրների վերազգային կորպորացիաները մոտ ապագայում անմասն չեն մնա ներդրումների կրճատման և եկամուտների կորստի ավելի մեծ չափաբաժնից: Խնդիրը նաև այն է, որ զարգացած երկրների վերազգային կորպորացիաներն ավելի շատ են ներգրավված համաշխարհային արժեքային շղթաներում, որոնք COVID-19-ի հետևանքով առաջացած պահանջարկի շոկի պատճառով կարող են ընդհատվել և ավելի մեծ վնաս հասցնել հենց այն կորպորացիաներին, որոնց արտադրանքը համաշխարհային արժեքային շղթաների արդյունք է:

Ինչ վերաբերում է համաշխարհային մակարդակով տնտեսական աճի կանխատեսումներին, ապա պետք է նշել, որ դեռ հունվարին Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները պնդում էին, որ

[7] https://index.minfin.com.ua/markets/oil/brent/2020-03/
[6] Investment trends monitor, United Nations, UNCTAD, March, 2020.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ռուսական ռուբլի/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումները 2020 թ. հունվար-մարտին[9]

2020 թ. համաշխարհային տնտեսական աճը կկազմի 3,4%՝ 2019 թ. 2,9%-ի համեմատ[10]: Այնուամենայնիվ, ներկայիս իրավիճակը փորձագիտական հանրությանը ստիպել է վերանայել նախկին կանխատեսումները: Հարկ է նշել, որ փորձագիտական գնահատականներն այս առումով ևս բաժանվում են երկու խմբի՝ կախված այն հանգամանքից, թե երբ հնարավոր կլինի կանխել COVID-19-ի տարածումը: Լավատեսական սցենարի համաձայն՝ եթե COVID-19-ի տարածումը հնարավոր լինի կանխել 2020 թ. առաջին կեսին, ապա համաշխարհային ՀՆԱ աճը կկազմի 2,4%՝ նախորդ տարվա համեմատ անկում ապրելով 0,5%-ով (գծապատկեր 3): Համեմատության համար նշենք, որ համաշխարհային ՀՆԱ ծավալը 2019 թ. կազմել է 86,6



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Համաշխարհային ՀՆԱ աճը 1995-2020 թթ.[11]*

[9] https://www.exchangerates.org.uk/USD-RUB-exchange-rate-history.html
[10] Investment trends monitor, United Nations, UNCTAD, March, 2020.
[11] https://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx և CORONAVIRUS: THE WORLD ECONOMY AT RISK, OECD Interim Economic Assessment, March, 2020:
* 2020 թ. տվյալը լավատեսական սցենարի կանխատեսում է:

տրիլիոն ԱՄՆ դոլար, ուստի դրա՝ 0,5%-ով նվազումը ենթադրում է 4,3 տրիլիոն ԱՄՆ դոլարի կորուստ:

Ավելի վատատեսական սցենարի դեպքում, եթե, օրինակ, COVID-19-ի տարածումը հնարավոր չեղավ կանխել ողջ տարվա ընթացքում, համաշխարհային ՀՆԱ աճը կկազմի ընդամենը 1,5%, իսկ կորուստը՝ մոտ 13 տրլն ԱՄՆ դոլար:

Իհարկե, համաշխարհային տնտեսության մեջ COVID-19-ի հետևանքով առաջացած ճգնաժամը, առաջին հերթին, հարվածելու է հետամնաց, այնուհետև՝ նավթարդյունահանող, իսկ վերջում՝ այն երկրներին, որոնք ներգրավված են համաշխարհային արժեքային շղթաների արտադրությունում: Սակայն, անկախ ամեն ինչից, համաշխարհային տնտեսական աճի դանդաղումը բացասաբար է ազդելու բոլոր երկրների տնտեսությունների վրա: Այնուամենայնիվ, գծապատկեր 3-ի տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ համաշխարհային տնտեսությունը, որը XXI դարում արդեն իսկ առերեսվել է խոշոր ցնցման՝ ի դեմս 2008 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, այս առումով ունի բավական հուսադրող փորձ, որտեղ, իհարկե, որոշիչ է երկրների կառավարությունների իրականացրած միջոցառումների դերը: Պահանջարկի շոկի հետևանքով առաջացած ճգնաժամին դիմակայելու համար այսօր ևս կառավարությունները մեծ անելիք ունեն, մասնավորապես՝ խթանել համախառն պահանջարկը, ինչպես նաև, ավելացնելով պետական ծախսերը, ձեռնարկություններին ապահովել դրամական միջոցներով, որպեսզի վերջիններս չգնան աշխատողների կրճատման ճանապարհով, ինչը, իր հերթին, թույլ կտա բնակչությանն ապահովել որոշակի եկամուտներով և խթանել պահանջարկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Coronavirus: The World Economy at Risk, OECD Interim Economic Assessment, March, 2020.
2. Investment trends monitor, United Nations, UNCTAD, March, 2020.
3. Oil price crash sends global stocks tumbling, The Financial Times Limited, 2020.
4. OPEC 178th (Extraordinary) Meeting of the Conference concludes: https://www.opec.org/opec_web/en/press_room/5865.htm
5. The coronavirus shock: A story of another global crisis and what policymakers should be doing about it. Trade and development report update, March, 2020.
6. https://www.exchangerates.org.uk/USD-RUB-exchange-rate-history.html
7. World Economic Outlook Update, January 2020: Tentative Stabilization, Sluggish Recovery?, IMF, January 9, 2020.
8. Сделка ОПЕК о сокращении добычи нефти сорвалась. Цены на нефть обвалились: https://www.bbc.com/russian/news-51770134
9. https://www.worldometers.info/oil/oil-consumption-by-country/#china
10. https://index.minfin.com.ua/markets/oil/brent/2020-03/
11. https://bankir.ru
12. https://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx

Диана ГАЛОЯН
Исполняющая обязанности ректора АГЭУ,
доктор экономических наук, профессор

О НЕКОТОРЫХ ПРОГНОЗИРУЕМЫХ ШОКАХ МИРОВОЙ ЭКОНОМИКИ ВПОСЛЕДСТВИИ COVID-19

Из-за распространения коронавируса на мировом рынке нефти произошло редкое сочетание факторов, влияющих на цены на нефть: с одной стороны, увеличение объемов поставок, а с другой стороны - снижение объемов потребления нефти и отсутствие «стабилизирующего производства» на рынке. Эксперты ООН также добавляют к вышеупомянутым факторам финансовые проблемы стран. Все это привело к девальвации национальных валют нефтедобывающих стран и стран с чувствительной к нефти экономикой, что, в свою очередь, по мнению экспертов, приведет к сокращению прямых иностранных инвестиций и к снижению мирового ВВП.

Ключевые слова: *коронавирус, нефть, мировой рынок, валютный курс, кризис, шок*

Diana GALOYAN
Acting Rector of ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

ON SOME OF THE PROJECTED SHOCKS OF THE WORLD ECONOMY SUBSEQUENTLY COVID-19

A rare combination of factors influencing oil prices in the global oil market has taken place due coronavirus outbreak: on the one hand, an increase in supply, and on the other hand, a decrease in oil consumption and the absence of «stabilizing production» in the market. UN experts also add to the above factors the financial problems of countries. All this led to the devaluation of the national currencies of oil-producing countries and countries with an oil-sensitive economy, which, in turn, according to experts, will lead to a reduction in foreign direct investment and a decrease in global GDP.

Keywords: *coronavirus, oil, world market, exchange rate, crisis, shock*